ԹՎԻՆԻՆԳ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
AM/14/ENP/ST/15

Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում - II փուլ

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ԱՅՑԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Աղքատության վիճակագրության վերաբերյալ

Գործողություն 4.3. Ուսուցողական այց

Ուսուցողական այց Իտալիայի ազգային վիճակագրական ծառայություն (Իստատ)

2016թ. ապրիլի 12-15-ը

Վերջնական տարբերակ

Հայաստանի
Հանրապետության ազգային
վիճակագրական
ծառայություն

Բովանդակություն

1. Ընդհանուր մեկնաբանություններ 4
2. Քաղած դասեր 4
3. Եզրակացություններ և առաջարկություններ 10
Հավելված 1. Ծրագիր 11
Հավելված 2. Հանդիպումների մասնակիցներ 13

Հապավումներ

ԵՄ	Եվրոպական միություն
ԱՎԻ	Ազգային վիճակագրական ինստիտուտ (օր. ՀՀ ԱՎԾ)
ԱՎՀ	Ազգային վիճակագրական համակարգ (պաշտոնական վիճակագրություն)
ՀՀ ԱՎԾ	Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն

1. Ընդհանուր մեկնաբանություններ

Այս ուսուցողական այցն իրականացվել է «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում - II փուլ» թվինինգ ծրագրի 3-րդ բաղադրիչի 4.3 գործողության շրջանակներում:

Ուսուցողական այցի նպատակն էր ստանալ գիտելիքներ իտալական փորձի և աղքատության վիճակագրության գործնական կիրառման վերաբերյալ, ինչպես նաև նկարագրել, թե ինչպես կարող է այդ գիտելիքն օգտագործվել ՀՀ ԱՎԾ-ում:

ՀՀ ԱՎԾ աշխատակիցները ցանկանում են իրենց երախտիքն արտահայտել բոլոր պաշտոնատար անձանց և անհատներին իրենց աջակցության և արժեքավոր տեղեկատվության համար՝ ստացված Իտալիայում, ինչը մեծապես օգտակար է եղել աշխատանքի համար:

Սույն հաշվետվության մեջ արտահայտված տեսակետները և դիտարկումները պատկանում են ՀՀ ԱՎԾ ուսուցողական այցի մասնակիցներին և կարող են չարտահայտել ԵՄ, ՀՀ ԱՎԾ կամ Իստատի տեսակետները:

2. Քաղած դասեր

Ուսուցողական այցի թեման էր «Աղքատության չափումը Իտալիայում»:

Ուսուցողական այցի թեմայում ընդգրկված ոլորտները և քաղած դասերն են.

- Բացարձակ աղքատության չափում,
- Ցուցանիշներ տնային տնտեսությունների բյուջետային հետազոտությունից,
- Աղքատությունը և սոցիալական բացառումները Իտալիայում՝ եվրոպական ցուցանիշների օգտագործմամբ,
- Որոշ մեթոդաբանական հարցեր (կշռման և մշակման ընթացակարգեր, եկամտի և սպառողական ծախսերի ոչ դրամական բաղադրիչները որպես տան վարձի փոխարինված արժեք և սեփական սպառման գնահատում, ընտրանքի սխալներ),
- Ելքային աղյուսակներ հիմնված Հայաստանում սոցիալական բացառումների հետազոտության մշակված տվյալների վրա,
- Սոցիալական բացառումներ և նյութական զրկվածություն. Նոր մարտահրավեր Եվրոպայի համար,
- Ամբողջացված դասախոսություն տարբեր ցուցանիշների վերաբերյալ:

Ուսուցողական այցի առաջին օրը՝ 2016թ. ապրիլի 12-ին պատվիրակությունն այցելեց Իստատ: Տնային տնտեսությունների տնտեսական պայմանների բաժնի պետ տկն Նիկոլետտա Պանուցցին ողջունեց ՀՀ ԱՎԾ աշխատակիցներին և առաջարկեց, որպեսզի բոլորը ներկայանան: Այնուհետև նա ներկայացրեց «Աղքատության չափումը Իտալիայում» թեման, որը ներառում էր.

- Իտալիայի ընդհանուր իրավիճակը,
- SS աղքատության մակարդակի/ընդգրկվածության և բնակչության մակարդակի միջև հիմնական նմանությունները. ենթադրյալ վարկած,
- Աղքատության ցուցանիշներ (աղքատության մակարդակ և ինտենսիվություն),
- Կոնցեպտային տարբերություններ,
- Հիմնական տարբերություններ. եկամուտ կամ սպառողական ծախս,
- Աղքատության գիծ,
- Աղքատության գծի սահմանման հետ կապված հիմնական տարբերությունները, համարժեքության սանդղակ,
- Ծայրահեղ աղքատություն,
- Իտալիայի տարածքում անօթևանության երևույթի ուսումնասիրմանն ուղղված ծրագիրը (անօթևանների հետազոտություն),
- Դեպի Հռոմի բնակչության վերաբերյալ տեղեկատվական համակարգ (Հռոմի ԵՄ ինտեգրացման նպատակները ընդգրկում են չորս կարևոր ոլորտներ. մուտքի հնարավորություն դեպի կրթություն, զբաղվածություն, առողջապահություն և բնակարանով ապահովվածություն)

Երկրորդ նյութը ներկայացվեց տնային տնտեսությունների տնտեսական պայմանների բաժնից վիճակագիր Իլարիա Արիգոնիի կողմից, ով ներկայացրեց «Ցուցանիշներ տնային տնտեսությունների բյուջետային հետազոտությունից»: Նրա ելույթն ընդգրկում էր հետևյալ թեմաները.

- Տնային տնտեսությունների բյուջետային հետազոտություն. հիմնական նպատակները, ծախսի սահմանումը, հետազոտության բաժինը, հետազոտության նախագծի հիմնական կողմերը, ընտրանքի նախագիծը, հետազոտության ժամանակը, հետազոտության հարցաթերթը,
- Ընթացիկ ծախսեր, սեփական արտադրության ապրանքներ,
- Հարցաթերթ նախնական հարցազրույցի համար, CAPI (համակարգչի կիրառմամբ անհատական հարցազրույցի վարում) հարցաթերթ վերջնական հարցազրույցի համար,
- Coicop(անհատական սպառման դասակարգիչն ըստ նպատակների) թե՞ Ecoicop(եվրոպական անհատական սպառման դասակարգիչն ըստ նպատակների)
- Հարաբերական աղքատության վերլուծություն. աղքատության գիծ, համարժեքության սանդղակ, տնային տնտեսություններ և անհատներ, հիմնական ցուցանիշներ, աղքատության գծի շեղումներ, որոշ արդյունքներ՝

տնային տնտեսությունների, անհատների, աղքատության տարբեր գծերի վերաբերյալ:

Նույն օրը երրորդ «Բացարձակ աղքատության չափում» խորագրով թեման ներկայացվեց աղքատության և զրկվածության բաժնի պետ տկն Ալեսանդրա Մասիի կողմից:

- Բացարձակ աղքատության ընդհանուր սահմանում, շեմ,
- Հիմնական ցուցանիշներ,
- Բացարձակ աղքատության ամսական շեմը՝ ընտրված տնային տնտեսությունների տեսակների համար 2014թ.-ին, ըստ աշխարհագրական տարածքի և համայնքի տեսակի, եվրոյով,
- Տնային տնտեսությունների բյուջետային հետազոտություն. ծախսի սահմանում,
- Տնային տնտեսություններ/անհատներ,
- Բացարձակ աղքատության մակարդակի բնութագիրը 2013-2014թթ. համար,
- Անչափահաս երեխաների բացարձակ աղքատության բնութագիրը 2014թ. համար:

2016թ. ապրիլի 13-ին կայացավ երկրորդ այցը Իտալիա: Ներկայացվեց երեք թեմա՝ «Աղքատությունը և սոցիալական բացառումները Իտալիայում՝ եվրոպական ցուցանիշների օգտագործմամբ», և ևս երկուսը նույն խորագրով՝ «Որոշ մեթոդաբանական հարցեր (կշռման և մշակման ընթացակարգեր, եկամտի և սպառողական ծախսերի ոչ դրամական բաղադրիչները որպես տան վարձի փոխարինված արժեք և սեփական սպառման գնահատում, ընտրանքի սխալներ)»:

Առաջին ներկայացնողը՝ տկն Լուչիա Կոպպոլան ներկայացրեց «Աղքատությունը և սոցիալական բացառումները Իտալիայում՝ եվրոպական ցուցանիշների օգտագործմամբ»: Պրեզենտացիայի ընթացքում նա խոսեց ԵՄ վիճակագրության մասին, մասնավորապես.

- Եկամուտ և կենսապայմաններ,
- Ընտրանքի նախագիծ,
- Հարցաթերթի կառուցվածք,
- Աղքատության հարաբերական չափում,
- *Աղքատության ռիսկի ներքո* ցուցանիշի դինամիկան,
- Նյութական զրկվածություն (ՆԶ) և սուր նյութական զրկվածություն (ԾՆԶ),
- Ցածր աշխատանքային ինտենսիվություն,
- *Աղքատության կայուն ռիսկի ներքո* (ԱԿՌՆ/APRP):

Եկրորդ ներկայացնողն էր պրն Դավիդե դի Լաուրեան՝ համատարած հաշվառումների, վարչական և վիճակագրական ռեգիստրների վարչությունից, ով խոսեց

«Բարեկեցության չափման նպատակով մի քանի հարց եկամտի և սպառման վերաբերյալ» թեմայով.

- Բարեկեցությունը որպես համալիր երևույթ,
- Երեք հիմնասյուներ՝ մարդկանց բարեկեցությունը չափելու և հասկանալու համար.
    - Նյութական կենսապայմաններ (կամ տնտեսական բարեկեցություն). որոշում են մարդկանց սպառման հնարավորությունները և նրանց ռեսուրսների վերահսկողությունը,
    - Կյանքի որակ. անհատների ոչ դրամական հատկանիշներ, որոնք ձևավորում են նրանց հնարավորությունները և շանսերը կյանքում, նրանք ունեն ներհատուկ արժեքներ տարբեր մշակույթների և համատեքստերի ներքո,
    - Սոցիալ տնտեսական և բնական համակարգեր, որտեղ մարդիկ ապրում և աշխատում են. սա կախված է նրանից, թե ինչպես են ընթացիկ մարդկային գործունեությունները ներգործում կապիտալի տարբեր պաշարներին (բնական, տնտեսական և սոցիալական), որոնք ամրապնդում են բարեկեցությունը:
- Տնտեսական բարեկեցության չափման երկու մոտեցումներ (մակրո և միկրո մոտեցում),
- մակրո և միկրո մոտեցումների խնդիրները և բացասական կողմերը,
- Շտիգլիցի հանձնաժողով և ամբողջացված մոտեցում,
- Միկրո և մակրո մոտեցումների փոխհամաձայնեցման կարիք. ԱՀ (B.of IT), և ԵՄ ԵԿՊՎ միջև,
- Տան վարձի փոխարինված արժեքի բաշխումային ազդեցությունը եկամտի վրա,
- Տան վարձի փոխարինված արժեքի բաշխումային ազդեցությունը. փոփոխությունները ժամանակի ընթացքում և ըստ երկրների,
- Տան վարձի փոխարինված արժեքի բաշխումային ազդեցությունը ԱՌՆ վրա ըստ զբաղեցման կարգվիճակի,
- Սոցիալական անցման ազդեցությունը աղքատության ռիսկի և աղքատության կայուն ռիսկի վրա:

Երրորդ ներկայացնողը սոցիալական և բնապահպանական վիճակագրության վարչության հետազոտող պրն Անդրեա Կուտիլլոն էր, ով ներկայացրեց «Իտալական ԵՄ-ԵԿՊՎ կշռման ընթացակարգը» թեման, մասնավորապես.

- Հետազոտության նախագիծ,
- Հետազոտության մեջ ընդգրկված բնակչության ներկայացուցչականությունը,
- Ռոտացիոն նախագիծ,

- Կշռման ընթացակարգը լայնական գնահատականների համար,
- Կշռման ընթացակարգը լայնական բաղադրիչի համար,
- Ընտրանք,
- Նախագծային կշիռներ մուտքային ենթաընտրանքի համար,
- Ընտրանքի չափ և ուղղում պատասխանների բացակայության դեպքում,
- Կապի հաստատման փաստացի արդյունքներ և պատասխանների բացակայություն,
- Պատասխանների բացակայության ուղղում,
- Օժանդակ փոփոխականներ պատասխանների բացակայության դեպքում,
- Քիչ փոփոխություններ տարիների ընթացքում (ներկայիս ընթացակարգ),
- Կալիբրացիա ռեգիստրների տեղեկությունների միջոցով,
- Կշռման ընթացակարգը լայնական բաղադրիչի համար,
- Միջանկյալ կալիբրացիա աշխատուժի հետազոտության միջոցով,
- Ընթացակարգի գնահատում,
- Կշռման ընթացակարգը երկայնական բաղադրիչի համար,
- Մի քանի բառ ՏՏ բյուջետային հետազոտության մասին:

Երրորդ այցելությունը Իստատ կայացավ 2016թ. ապրիլի 14-ին: Ուսուցողական այցի մասնակիցները լսեցին երկու պրեզենտացիա համատարած հաշվառումների և վիճակագրական ռեգիտրների վարչության հետազոտող պրն Դավիդե Դի Լաուրեայի և տնային տնտեսությունների տնտեսական պայմանների բաժնի հետազոտող տկն Լուչիա Կոպպոլայի կողմից:

Պրն Դավիդե Դի Լաուրեան ներկայացրեց «Ելքային աղյուսակները ստացված Հայաստանում իրականացված սոցիալական բացառումների հետազոտության մշակված տվյալների հիման վրա»: 2016թ. հունվարի 1-ից Հայաստանն սկսեց իրականացնել սոցիալական բացառումների հետազոտություն և նախքան ուսուցողական այցը ԱՎԾ-ն Իստատի հետազոտողին ուղարկեց երկու ամսվա տվյալների բազա՝ ելքային աղյուսակներ դուրս բերելու նպատակով: Որոշ ելքային աղյուսակներ արտացոլում էին անմատչելիության բարձր մակարդակ մի քանի տարրերի առնչությամբ:

1. Կարո՞ղ է արդյոք ձեր տնային տնտեսությունը թույլ տալ անսպասելի ծախս 40.000 դրամի չափով և վճարել իր սեփական ռեսուրսների միջոցով (առանց պարտք վերցնելու կամ ֆինանսական օգնություն խնդրելու):
2. Կարո՞ղ է արդյոք ձեր տնային տնտեսությունը թույլ տալ մեկշաբաթյա ամենամյա արձակուրդ տանից հեռու՝ այդ թվում նաև մնալով երկրորդ կացարանում կամ ընկերների/բարեկամների մոտ:
3. Կարո՞ղ է արդյոք ձեր տնային տնտեսությունը թույլ տալ տանը ապահովել համարժեք ջերմաստիճան:

4. Արդյո՞ք ձեր տնային տնտեսությունն ունի ավտոմեքենա, ֆուրգոն անձնական օգտագործման համար:

Փորձագետը նշեց, որ ստացված ելքային աղյուսակներն արտացոլում են վերոնշյալ հարցերի բացասական պատասխանների բարձր մակարդակ:
Երկրորդ նյութը ներկայացվեց տկն Լյուչիա Կոպպոլայի կողմից: Ներկայացված թեման էր «Սոցիալական բացառումներ և նյութական զրկվածություն. նոր մարտահրավեր Եվրոպայի համար», մասնավորպես.

- Աղքատության և սոցիալական բացառումների ռիսկի ներքո (AROPE),
- Նյութական զրկվածություն (MD) և սուր նյութական զրկվածություն (SMD),
- Նոր մարտահրավեր Եվրոպայի համար,
- Լրացուցիչ մոդուլ նյութական զրկվածության վերաբերյալ 2009,
- Նյութական զրկվածության (MD) նոր ցուցանիշների սահմանում,
- Հարցերի վերջնական ցուցակ (Ցուցանիշ ամբողջ բնակչության համար),
- Նյութական զրկվածության շեմ,
- Նյութական զրկվածության նոր ցուցանիշներ,
- Նյութական զրկվածության նոր ցուցանիշի ազդեցությունը AROPE-ի վրա,
- Նյութական զրկվածության (MD) ցուցանիշի սահմանումը,
- Հարցերի վերջնական ցուցակ. Ցուցանիշներ երեխաների համար,
- Երեխաների նյութական զրկվածության շեմը,
- Հաջորդ քայլեր.
    - Համեմատական վերլուծության հաստատում՝ 2009թ. լրացուցիչ մոդուլի հիման վրա (այսինքն՝ ԵՄ երկրների մեծ մասում ընտրված հարցերի համապատասխանություն, վավերականություն, հուսալիություն և ադիտիվություն)
    - Համեմատել նոր և ընթացիկ MD ցուցանիշների միտումները:

Առաքելության չորրորդ օրը՝ 2016թ. ապրիլի 15-ին քննարկվեց հետևյալ թեման՝ «Ամբողջացված դասախոսություն տարբեր ցուցանիշների վերաբերյալ», որը ներկայացվեց տկն Նիկոլետտա Պանուցցիի կողմից:

- Ի՞նչ պատահեց Իտալիայում ճգնաժամի ընթացքում,
- 2007-2012թթ. գները բարձրացան սպառողական ծախսից և հատկապես եկամուտից,
- Սպառում խնայողություններով և պարտքով,
- Ո՞վ վճարեց ճգնաժամի հետևանքով առաջացած ծախսերի մեծ մասը,
- Տարածքային խզումն աճեց,
- Աղքատություն և զրկվածություն,

- 2009թ.-ի 2010թ.-ի միջև աղքատության ռիսկը մեծացավ (պայմանավորված եկամտով),
- 2011թ.-ի և 2012թ.-ի միջև բացարձակ աղքատությունն աճեց (պայմանավորված սպառողական ծախսով),
- Հարաբերական աղքատության դինամիկան հաստատում է բացարձակ աղքատության առնչությամբ բացահայտված վատթարացումները,
- Սուր նյութական զրկվածությունն աճեց 2010թ. 6.9%-ից 11.2%-ի 2011թ.-ին, և 14.3%-ի 2012թ.-ին:

ՀՀ ԱՎԾ տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ տկն Դիանա Մարտիրոսովան ներկայացրեց ՀՀ ԱՎԾ տեսակետը: Նա նշեց, որ բոլոր պրեզենտացիաները հետաքրքիր էին և ներկայացրեց հայկական ՏՏԿԱՀ-ը իրականացնելու համար կիրառվող մեթոդը և արդյունքում ստացվող վիճակագրական ցուցանիշները:

3. Եզրակացություններ և առաջարկություններ

Շատ հետաքրքիր էր ուսումնասիրել իտալական վիճակագրության փորձը տնային տնտեսությունների հետազոտություններ իրականացնելու ոլորտում (ՏՏԲՀ և ԵԿՊՎ), բացարձակ աղքատության, աղքատության և սոցիալական բացառումների, և նյութական զրկվածության չափման մեթոդները: Տնային տնտեսությունների բյուջետային հետազոտության ցուցանիշները ներկայացվեցին շատ հետաքրքիր ձևով: Շատ կարևոր էր դիտարկել տարբեր ցուցանիշներ՝ ամբողջացված դասախոսությունից:

Իտալիայում տնային տնտեսությունների բյուջետային հետազոտության ամենուշագրավ մասը CAPI-ի (համակարգչի կիրառմամբ անհատական հարցազրույցի վարում) օգտագործումն էր COICOP(անհատական սպառման դասակարգիչն ըստ նպատակների)-ի բոլոր տարրերի և ապրանքների ցուցակի հետ, որտեղ հարցազրուցավարները լրացնում են բոլոր տեսակի ծախսերը: Հետազոտության իրականացման մեթոդը և ընտրանքի մոտեցումը (երկայնական և յուրաքանչյուր չորս տարին մեկ ընտրանքի փոփոխվող վանդակներ) շատ հետաքրքիր էր: Շատ հետաքրքիր էր լսել, թե ինչպես է Իտալիայի բնակչությունը հաղթահարել համաշխարհային տնտեսական և ֆինանսական ճգնաժամը, ինչպիսին է երկրի տարբեր մասերի միջև անհավասարությանը (հյուսիս, կենտրոն, հարավ և կղզիներ) և թե որ տնային տնտեսություններն են առավել խոցելի:

ՀՀ ԱՎԾ-ն լսեց Եվրոպայի համար սոցիալական բացառումների և նյութական զրկվածության նոր մարտահրավերի մասին:

Շատ կարևոր էր տեսնել ելքային աղյուսակները սոցիալական բացառումների 2016թ.հունվար-փետրվարին իրականացված հետազոտության հայկական տվյալների բազայից:

Ուսուցողական այցի մասնակիցները նկատեցին անընդունելի մակարդակ որոշ հարցերի հետ կապված թվերի մեջ:

Հավելված 1. Ծրագիր

«Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում - II փուլ»

Բաղադրիչ 4 – Աղքատության վիճակագրություն

Գործողություն 4.3 Ուսուցողական այց

2016թ. ապրիլի 12-15-ը

Իստատ – Օչեանո Պաչիֆիկո պողոտա 171, Սենյակ 126

Ապրիլի 12

9.30	Ողջույնի և ներածական խոսք (Իստատ, Ն. Պանուցցի)
9.45 – 11	Աղքատության չափումները Իտալիայում (Իստատ, Ն. Պանուցցի)
	Աղքատության չափումը Հայաստանում, ներառյալ Թվինինգ ծրագրի դերը և նպատակները (ՀՀ ԱՎԾ)
Ընդմիջում	
11.30 – 13	Տնային տնտեսությունների բյուջետային հետազոտության ցուցանիշներ (Իստատ, Ի. Արիգոնի)
13 – 14	Ճաշի ընդմիջում
14 – 16	Բացարձակ աղքատության չափում (Իստատ, Ա. Մասի)

Ապրիլի 13

9.30 – 11	Աղքատությունը և սոցիալական բացառումները Իտալիայում՝ օգտագործելով եվրոպական ցուցանիշներ (Իստատ, Լ. Կոպպոլա)
Ընդմիջում	
11.30 – 13	Որոշ մեթոդբանական հարցեր (կշռման և տվյալների մշակման ընթացակարգր, եկամտի և սպառողական ծախսերի ոչ դրամական բաղադրիչները որպես տան վարձի փոխարինված արժեք և սեփական սպառման գնահատում, ընտրանքի սխալներ) – մաս I (Իստատ, Դ. Դի Լաուրեա)
13 - 14	Ճաշի ընդմիջում
14 – 16	Որոշ մեթոդբանական հարցեր (կշռման և տվյալների մշակման ընթացակարգր, եկամտի և սպառողական ծախսերի ոչ դրամական բաղադրիչները որպես տան վարձի փոխարինված արժեք և սեփական սպառման գնահատում, ընտրանքի սխալներ) - մաս II (Իստատ, Ա. Կուտիլլո)

Ապրիլի 14

9.30 – 13	Հայաստանում սոցիալական բացառումների հետաազոտության մշակման փուլում գտնվող տվյալների վրա հիմնված ելքային աղյուսակներ (Իստատ, Դ. Դի Լաուրեա)

(ներառյալ ընդմիջումը 11 – 11.30)

13 – 14 Ճաշի ընդմիջում

14 – 16 Սոցիալական բացառումներ և նյութական զրկվածություն. Նոր մարտահրավեր Եվրոպայի համար (Իստատ, Լ. Կոպպոլա)

Ապրիլի 15

9.30 – 13 Ամբողջացված դասախոսություն տարբեր ցուցանիշների վերաբերյալ (Իստատ, Ն. Պանուցցի)

13 – 14 Ճաշի ընդմիջում

14 – 16 Հ&Պ, քննարկում և եզրակացություններ

Հավելված 2. Հանդիպումների մասնակիցներ

ՀՀ ԱՎԾ

Պրն Գագիկ Գևորգյան, ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ
Տկն Դիանա Մարտիրոսովա, տնային տնտեսությունների հետազոտության բաժնի պետ
Տկն Լուսինե Մարկոսյան, տնային տնտեսությունների հետազոտության բաժնի լիսավոր մասնագետ
Արուս Գալստյան, տնային տնտեսությունների հետազոտության բաժնի առաջին կարգի մասնագետ

Թվինինգ ծրագիր

Տկն Անուշ Պողոսյան, թարգմանիչ

Իստատ, Իտալիայի ազգային վիճակագրական ինստիտուտ

Տկն Նիկոլետտա Պանուցցի, տնային տնտեսությունների տնտեսական պայմանների բաժնի պետ
Տկն Իլարիա Արիգոնի, տնային տնտեսությունների տնտեսական պայմանների բաժնի վիճակագիր
Տկն Լուչիա Կոպպոլա, տնային տնտեսությունների տնտեսական պայմանների բաժնի հետազոտող
Պրն Անդրեա Կուտիլլա, հետազոտող, սոցիալական և բնապահպանական վիճակագրության վարչություն
Պրն Դավիդե Դի Լաուրեա, հետազոտող, համատարած հաշվառումների, վարչական և վիճակագրական ռեգիստրների վարչություն
Տկն Ալեսսանդրա Մասի, աղքատության և զրկվածության բաժնի պետ